Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

0125.328-Ե,

338.1
Գ-68

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ
«ՇԵՎԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1938

338.1
Գ-68

17 FEB 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Проверено
1949 г.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

0125.328-Ե,

ԴՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ
«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1938

НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

20.03.2013

Գ-ՏԱԵ.2.16

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ ՍՍՀ
им. Г. Мясниняна
Ս. ՄԵԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

28746-60

1. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կրասնոդարի յերկրամասի Հայկական ռայոնի

.....աշխատավոր գյուղացիները կամավոր կերպով միանում, կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և կազմակերպված ընդհանուր աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն հանրային տնտեսություն, ապահովեն լիակատար հաղթանակ կուլակի դեմ, բոլոր շահագործողների ու աշխատավորության թշնամիների դեմ, ապահովեն լիակատար հաղթանակ կարիքի ու խավարի դեմ, մանր անհատական տնտեսության հետամնացության դեմ, ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն և այդպիսով ապահովեն կոլխոզնիկների լավագույն կյանքը։

Կոլխոզային ուղին, սոցիալիզմի ուղին, միակ ճիշտ ուղին է աշխատավոր գյուղացիների համար։ Արտելի անդամները պարտավորվում են ամրացնել իրենց արտելը, աշխատել ազնվորեն, բաժանել կոլխոզային յեկամուտն ըստ աշխատանքի, պահպանել հանրային սեփականությունը, պահպանել կոլխոզային բարիքը

պահպանել տրակտորներն ու մեքենաները, սահմանել ձիու լավ խնամքը, կատարել իրենց բանվորա-գյուղացիական պետության առաջադրանքները և այդպիսով դարձնել իրենց կոլխոզը բոլշևիկյան, իսկ կոլխոզնիկներին ունևոր։

2. ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Վոչնչացվում են բոլոր միջնակները (մեժանները), վորոնք առաջ բաժանում էին արտելի անդամների հողաբաժինները, և բոլոր դաշտային հողաբաժինները վեր են ածվում միասնական հողային մասսիվի, վորը կոլեկտիվ կերպով ոգտագործում է արտելը։

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի հող ԽՍՀՄ-ում) համաժողովրդական պետական սեփականություն է։ Այդ հողը բանվորա-գյուղացիական պետության որենքներով ամրացվում է արտելին՝ անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ ընդմիշտ, և յենթակա չե վոչ առ ու ծախի, վոչ ել արտելի կողմից վարձու տրվելու։

Խորհուրդների ռայոնական գործադիր կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս է պետական ակտ հողն անժամկետ ոգտագործելու համար, վորի մեջ վորոշվում են արտելի ոգտագործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ըստվորում այդ հողերի կրճատում չի թույլատրվում, այլ թույլատրվում է միայն ավելացնել դրանք՝ կամ պետական ազատ հողերի ֆոնդի հաշվին, կամ թե մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին այն պայմանով, վոր արտելի հողաշերտերի մեջ վոչ մի այլ հողաշերտ չմտնի։

Յուրաքանչյուր կոլխոզնիկի տնտեսության անձնական ոգտագործման համար հանրայնացված հողերից

հատկացվում է փոքր հողակտոր, վորպես տնամերձ հողամաս (բանջարանոց, պարտեզ)։

Կոլխոզնիկի տնտեսության կողմից անձնապես ոգտագործած տնամերձ հողամասի չափը (չհաշված բնակելի շենքերի բռնած հողը) կարող է լինել 0,35 հեկտարից մինչև 0,5 հեկտար։ 0,5 հեկտարից ավելի տնամերձ հողամաս ունեցող կոլխոզնիկների տնտեսություններից այս սահմանված նորմայից ավելի հողը կտրվում և վերցվում է։ 0,35 հեկտարից պակաս տնամերձ հողամաս ունեցող կոլխոզնիկների տնտեսությունների տնամերձ հողամասերը կարող են ավելացվել մինչև 0,35 հեկտարի հասցնելու չափ ի հաշիվ 0,50 հեկտարից ավելի տնամերձ հողամաս ունեցող կոլխոզնիկների տնտեսությունների հողային ավելցուկից կտրածի, ի հաշիվ գյուղում ներկայումս յեղած չոգտագործվող տնամերձ հողերի, ինչպես նաև մենատնտեսների տնամերձ հողերի չափը կոլխոզնիկների տնամերձ հողերի չափի հանդեպ 10% պակասեցնելու միջոցով։ Կոլխոզնիկների տնտեսությունների տնամերձ հողամասերի բաշխումը կարող է կատարվել միայն գյուղում այնտեղ, վորտեղ գտնվում է արտելի կոլխոզնիկների տնտեսությունների տնամերձ հողերի հիմնական մասը։

3. Արտելի միասնական հողային մասսիվը վոչ մի դեպքում չպետք է նվազի։ Արգելվում է արտելից դուրս յեկած անդամներին հող հատկացնել ի հաշիվ արտելի հողային տարածության։ Արտելից դուրս յեկողները կարող են հող ստանալ միմիայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից։

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքաշրջանառության համաձայն։ Ցանքաշրջանառության դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին մշտական հողամաս է ամրացվում

ցանքաշրջանառության ամբողջ ժամանակաշրջանի համար։

Անասնապահական խոշոր ֆերմաներ ունեցող կոլխոզներում անհրաժեշտության դեպքում, յեթե բավական չափ հող լինի, կարելի յե առանձնացնել վորոշ հողամասեր, վորոնք ամրացվում են ֆերմային և ոգտագործվում են ֆերմայի անասունների համար կերաբույսեր ցանելու նպատակով։

3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են բոլոր բանող անասունները, գյուղատնտեսական ինվենտարը (գութանը, շարքացանը, փոցխը, կալսիչը հնձիչը), սերմացվի պաշարները, կերի միջոցները՝ հանրայնացված անասունները պահպանելու համար անհրաժեշտ քանակությամբ, արտելային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղատնտեսական մթերքները վերամշակող բոլոր ձեռնարկությունները։

Չեն հանրայնացվում և մնում են կոլխոզնիկի տնտեսության անձնական ոգտագործման համար՝ բնակելի շենքերը, նրա անձնական անասուններն ու թռչունները և կոլխոզնիկի տնտեսության անձնական ոգտագործման անասունների ու թռչունների պահպանության համար անհրաժեշտ տնտեսական շենքերը։

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայնացվելիս՝ արտելի անդամներին մնում է անձնապես ոգտագործելու համար գյուղատնտեսական այն ժամանակ ինվենտարը, վորն անհրաժեշտ է տնամերձ հողամասերում կատարելիք աշխատանքի համար։

Արտելի վարչությունն անհրաժեշտ դեպքում առանձնացնում է հանրայնացված բանող անասուններից մի

քանի ձի արտելի անդամների անձնական կարիքների սպասարկման համար՝ վորոշ վճարով։

Սահմանել դրամական վարձ կոլխոզնիկների իրենց անձնական պետքերի համար քաշող ուժով ոգտվելու դեպքում հետևյալ չափերով.

ա) կոլխոզից վորևե տեղ գնալու համար սայլով ոգտվելիս՝ մինչև 10 կիլոմետր և կես որվա ժամկետով—85 կոպ.

բ) մինչև 20 կիլոմետր գնալու և մեկ որվա ժամկետով—1 ռ 60 կոպ

գ) տնամերձ տնտեսության 0,1 հեկտար հողը վարելու և փոցխելու համար—1 ռուբլի.

դ) ձի վարձող արտելի անդամների մոտ առձեռն փող չլինելու դեպքում, արտելի վարչությունը վարձի հատուցումը կարող է հետաձգել մինչև աշուն։

յե) հիվանդանոց գնալու, ջրոզաց գնալու, հացահատիկները հացահանձնման նպատակով ելեվատոր տանելու, կեր և վառելիք բերելու դեպքերում արտելի անդամներին ձի տրվում է անվարձ։

Արտելը կազմակերպում է խառն անասնաբուծական ապրանքային ֆերմա կամ, մեծ քանակությամբ անասուններ լինելու դեպքում՝ մի քանի մասնագիտացված անասնաբուծական ապրանքային ֆերմաներ։

5. Հացահատիկային, բամբակացան, ճակնդեղացան, վուշացան, կանեփացան, կարտոֆիլա-բանջարաբուծական, թեյաբուծական ու ծխախոտագործական ռայոններում յուրաքանչյուր կոլխոզնիկի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ մի կով, մինչև յերկու գլուխ յեղջերավոր մատղաշ անասուն, մի մայր-խոզ իր ձագերով կամ, յեթե կոլխոզի վարչությունն անհրաժեշտ գտնի՝ յեր-

կու մայր-խոզ-իրենց ձագերով, մինչև 10 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն ու ճագար և մինչև 20 փեթակ։

4. ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է իր կոլեկտիվ տնտեսությունը վարել պլանով, ճշտիվ կատարելով բանվորա-գյուղացիական կառավարության որդանների սահմանած գյուղատնտեսական արտադրության պլանները և արտելի ունեցած պարտավորությունները պետության հանդեպ։

Արտելն ընդունում է ճշտորեն կատարելու համար ցանքի, ցելի, շարամեջ մշակման, բերքահավաքի, կալսելու և աշնանավարի պլանները, վորոնք կազմվում են կոլխոզների դրությունն ու առանձնահատկությունները հաշվի առնելով, ինչպես և անասնապահության զարգացման պետական պլանը։

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.

ա) բարձրացնել կոլխոզային դաշտերի բերքատվությունը՝ մացնելով և պահպանելով կանոնավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, ընդարձակելով ու լավ մշակելով ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական բույսերի շարամեջ մշակումը, ժամանակին բուկ տալով բամբակը, պարարտացնելով հողը՝ թե անասնապահական ապրանքային ֆերմաների և թե կոլխոզնիկների տնտեսությունների գոմաղբով, հանքային պարարտանյութերով, պայքար մղելով գյուղատնտեսական վնասատուների դեմ, ժամանակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորստի, պահպանելով ու մաքրելով վոռոգիչ կառուցումները, պահպանելով անտառները, տնկելով դաշտերը պահպանող անտառաշերտեր, խստիվ պահպանելով տեղական հողային որգանների սահմանած ագրոտեխնիկական կանոնները.

բ) ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, խնամքով պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր, ողափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի ցանքերը.

գ) ընդարձակել ցանքերի տարածությունը, ոգտագործելով արտելի տնորինության տակ գտնված ամբողջ հողը, բարելավելով և մշակելով բարձիթող արված հողերը, հերկելով խոպան հողերը և կիրառելով ներկոլխոզային հողաշինարարություն.

դ) հանրային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինվենտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմացուն և արտադրության մյուս միջոցները, ինչպես և այն բոլոր տրակտորները, շարժիչները, կալսիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, վոր բանվորա-գյուղացիական պետությունը մեքենատրակտորային կայանների միջոցով վորպես ոգնություն տալիս է կոլխոզներին, կազմակերպել հանրայնացված կենդանի և մեռյալ ինվենտարի ճիշտ խնամքը, աշխատելով, վոր կոլխոզի մեջ անասուններն ու ինվենտարը լավ դրության մեջ լինեն.

յե) կազմակերպել անասնապահական ֆերմաներ, իսկ վորտեղ հնարավոր է՝ նաև ձիաբուծական լֆերմաներ, ավելացնել անասունների թիվը և բարեավել անասունների ցեղն ու մթերատվությունը ֆերմաներում, արտելային արտադրության մեջ ազնվորեն աշ-

խատող անդամներին ոգնություն ցույց տալ՝ կով և մանր անասուն ձեռք բերելու գործում, ցեղական բերելավված արտադրողներով սպասարկել վոչ մեծ ֆերմաների անասուններին, այլև արտելի անդամների կողմից անձնապես ոգտագործվող անասուններին, պահպանել սահմանված զոոտեխնիկական և անասնաբուժական կանոնները։

զ) ընդարձակել կերաբույսերի արտադրությունը, բարելավել մարգագետիններն ու արոտավայրերը, ոգնություն ցույց տալ հանրային արտադրության մեջ բարեխղճորեն աշխատող արտելի անդամներին, ապահովելով նրանց համար, վորտեղ այդ հնարավոր է, կոլխոզային արոտավայրերից ոգտվելը, ինչպես և ըստ հնարավորության կերտալով նրանց անձնական ոգտագործման անասունների համար ի հաշիվ աշխորերի։

է) զարգացնել գյուղատնտեսական արտադրության բոլոր մյուս ճյուղերը, համաձայն տեղի բնական պայմանների, և տնայնագործական զբաղմունքները՝ համաձայն ռայոնի պայմանների, պահպանել ու մաքրել գոյություն ունեցող լճակները, կառուցել նորերը և զարգացնել նրանց մեջ ձկնատնտեսությունը։

ը) կազմակերպել տնտեսական և հանրային շենքերի շինարարությունը հանրային հիմունքներով։

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորակավորումը, ոժանդակել կոլխոզնիկներին նրանցից բրիգադիրներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ, շոֆերներ, անասնաբուժակներ ու սանիտարներ, ձիապաններ, խոզապահներ, անասնապահներ, հովիվներ, նախրապաններ, խրճիթ-լաբորատորիաների աշխատողներ պատրաստելու գործում։

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդակը, արմատացնել թերթերը, գրքերը, ռադիոն,

կինոն, ստեղծել ակումբներ, գրադարաններ և ընթերցարաններ, ունենալ բաղնիքներ, վարսավիրանոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր կայաններ դաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցներում տնկել զանազան, առանձնապես պտղատու ծառեր, աջակցել կոլտնտեսականներին՝ բարելավելու և զարդարելու իրենց բնակարանները։

ի) կանանց ներգրավել կոլխոզային արտադրության և արտելի հասարակական կյանքի մեջ, ընդունակ և փորձված կոլխոզնիկուհիներին առաջ քաշելով ղեկավար աշխատանքի, ըստ հնարավորության թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝ մանկամսուրներ, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով։

Վարչությունը և արտելի բոլոր անդամները պարտավորվում են.

ա) կատարել հողի տարածության լայնացում՝ մաքրելով և թփերից ու մացառներից ազատելով նոր հողամասեր։

բ) կազմակերպել և զարգացնել մեղվաբուծական տնտեսությունը։

գ) զարգացնել խաղողաբուծություն, այգեգործություն, ծխախոտաբուծություն և մեծագույն չափերով ոգտագործել վայրի բնող ծառերի պտուղները։

դ) զարգացնել ոժանդակ տնայնագործական (կուսակար) արտադրություններ։

յե) .....

զ) .....

ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամների ընդունելությունը կատարվում է արտելի անդամների ընդհանուր ժողովը, վորը

հաստատում է վարչության կողմից մտցված նոր անդամների ցուցակները։

Արտելի անդամ կարող են դառնալ բոլոր աշխատավորները 16 տարեկանից սկսած՝ ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ։

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքից զրկված բոլոր անձինք։

Ծանոթություն. — Այս կանոնից թույլատրվում է բացառություն անել.

ա) Ձայնազուրկների այն զավակների վերաբերմամբ, վորոնք մի շարք տարիների ընթացքում զբաղված են հանրօգուտ աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն.

բ) Նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի անդամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլխոզային յելույթների համար, իրենց նոր բնակավայրում յերեք տարվա ընթացքում իրենց ազնիվ աշխատանքով և Խորհրդային իշխանության ձեռնարկումներին օժանդակելով, ցույց են տվել, վոր իրենք ուղղվել են.

Այն մենատնտես գյուղացիները, վորոնք արտել մտնելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաճառել են իրենց ձիերը և սերմացու չունեն, արտել են ընդունվում այն պայմանով, վոր պարտավորվեն իրենց յեկամուտներից մինչև վեց տարի ժամանակամիջոցում մաս-մաս մուծել ձիու և սերմացվի արժեքը ընամթերքով։

8. Անդամների վտարումն արտելից կարող է կատարվել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորին ներկա յե արտելի անդամների ընդհանուր թվի առնվազը յերկու յերրորդը։ Արտելի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անպայման մատնանշվում է ժողովին ներկա գտնվող կոլխոզնիկների թիվը և վտարելու համար քվե տվողների թիվը։ Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդների ռայոնային գործադիր կոմիտեյին բողոքում է իր վտարման դեմ, հարցը վերջնականապես լուծում է խորհուրդների ռայոնային գործադիր կոմիտեյի նախագահությունը՝ արտելի վարչության նախագահի և բողոքատվի ներկայությամբ։

6. ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Արտել մտնողները պետք է մուծեն մուտքի վճարը դրամով՝ 20 — 40 ռուբլի յուրաքանչյուր տնտեսության համար, նայած նրանց տնտեսության կարողությանը։ Մուտքի վճարները մտցվում են արտելի անբաժանելի ֆոնդի մեջ։

10. Արտելի անդամների հանրայնացված գույքի արժեքի (բանող անասուններ, ինվենտար, տնտեսական շենքեր և այլն) մի քառորդից մինչև կեսը հատկացվում է արտելի անբաժանելի ֆոնդին, ըստ վորում անբաժանելի կապիտալին արվող հատկացման ավելի բարձր տոկոս է կիրառվում ավելի ուժեղ տնտեսությունների նկատմամբ։ Գույքի մնացած մասը պետք է մտցնել արտելի անդամի փայավճարի մեջ։

Վարչությունն արտելի կազմից դուրս յեկող անդամների հաշիվը մաքրում և նրանց փայավճարը վերադարձնում է դրամով, ըստ վորում արտելից դուրս յեկողին կարող է հողաբաժին տրվել միմիայն արտելի հողային տարածության սահմաններից դուրս։ Հաշվեհարդարը, վորպես կանոն, կատարվում է տնտեսական տարին վերջանալուց հետո։

11. Արտելն իր ստացած բերքից և անասնապահության մթերքներից՝

ա) կատարում է պետության հանդեպ մթերք հանձնելու և սերմվարկերը վերադարձնելու իր ունեցած պարտավորությունները, մեքենատրակտորային կայանին բնամթերքով վճարում է մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքի համար, նրա հետ կնքված պայմանագրի համաձայն, որն որենքի ուժ ունի, և կատարում է կոնտրակտացիայի պայմանագրերը։

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի համար և կեր՝ անասուններին կերակրելու համար ամբողջ տարվա պահանջի չափով, ինչպես և անբերրիությունից և կերի պակասությունից ապահովելու համար ստեղծում է անձեռնմխելի, տարեցտարի վերականգնվող սերմի ու կերի ֆոնդ՝ տարեկան պահանջի 10—15 տոկոսի չափով.

գ) ընդհանուր ժողովի որոշմամբ հատուկ ֆոնդ է ստեղծում հաշմանդամներին, ծերերին, ժամանակավորապես իրենց աշխատունակությունը կորցրածներին, կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին, մանկամսուրներին ոգնելու և վորբերի պահպանման համար—այս բոլորը պիտի կազմի ընդհանուր արտադրանքի յերկու տոկոսից վոչ ավելին.

դ) արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշած չափով հատկացնում է մթերքների մի մասը՝ պետությանը կամ շուկայում վաճառելու համար.

յե) արտելի բերքի և նրա անասնապահության մթերքների մնացած ամբողջ մասան արտելը բաշխում է իր անդամների մեջ ըստ աշխորերի։

12. Արտելն իր ստացած դրամական յեկամուտներից՝

ա) պետությանը տալիս է որենքով սահմանված հարկերը և ապահովագրական վճարումներն է կատարում.

բ) անհրաժեշտ ծախսեր է անում արտադրական ընթացիկ կարիքների համար, այն է՝ գյուղատնտեսական գործիքների ընթացիկ նորոգման, անասունների բուժման, վնասատուների դեմ պայքարելու համար և այլն.

գ) հոգում է արտելի վարչատնտեսական ծախսերը, այդ նպատակի համար հատկացնելով դրամական յեկամուտների յերկու տոկոսից վոչ ավելին.

դ) միջոցներ է հատկացնում կուլտուրական կարիքների, այն է՝ բրիգադավարներ և այլ կադրեր պատրաստելու, մանկամսուրներ կազմակերպելու, ռադիո դնելու և այլն.

յե) լրացնում է արտելի անբաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ դնելու, շինությունների արժեքը վճարելու և դրսից շինարարության մեջ ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, գյուղատնտեսական բանկին յերկարատև վարկերի հերթական վճարները մուծելու համար, ըստ վորում հոգում անբաժանելի ֆոնդի հատկացումներ ու լրացումներ են կատարվում արտելի դրամական յեկամուտների 10 տոկոսից մինչև վոչ ավելի, քան 20 տոկոսի չափով.

զ) արտելի դրամական յեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաշխում է իր անդամների միջև՝ ըստ աշխորերի։ Ստացված բոլոր յեկամուտներն անպայման գրանցվում են արտելի մուտքի մատյաններում՝ հենց ստացվելու որը։

Արտելի վարչությունը կազմում է թե յեկամուտների մուտքի և թե միջոցների ծախսման տարեկան նախահաշիվ, վորն ուժի մեջ է մտնում միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո։

Միջոցների ծախսումը վարչությունը կարող է կատարել միմիայն այն հոդվածների համաձայն, որոնք նախատեսված են նախահաշվով։ Վարչությանը չի թույլատրվում միջոցներն ինքնակամ կերպով փոխադրել ծախսի նախահաշվի մի հոդվածից մյուսը, և միջոցները մի հոդվածից մյուսը փոխադրելու համար վարչությունը պարտավոր է ստանալ ընդհանուր ժողովի թույլտվությունը։

Արտելն իր ազատ դրամական միջոցները պահում է բանկում՝ իր ընթացիկ հաշվում կամ խնայողական դրամարկղում։ Միջոցներն ընթացիկ հաշվից դուրս են գրվում միմիայն արտելի վարչության հրամանով, որը վավերական է արտելի նախագահի ու հաշվետարի ստորագրությամբ։

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

13. Արտելի տնտեսության բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կարգ ու կանոնների։ Գյուղատնտեսական աշխատանքների համար վարձով ոգտագործել թույլատրվում է միմիայն այն անձանց, որոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և պատրաստություն (գյուղատնտեսներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն)։

Թույլատրվում է ժամանակավոր բանվորներ վարձել միմիայն բացառիկ դեպքերում, յերբ շտապ աշխատանքները պահանջված ժամկետին հնարավոր չէ կատարել արտելի անդամների առձեռն ուժերով՝ նրանց լիակատար ծանրաբեռնվածության դեպքում, ինչպես և շինարարական աշխատանքների համար։

14. Վարչությունն արտելի անդամներից ստեղծում է արտադրական բրիգադներ։

Դաշտավարական բրիգադները կազմվում են առնվազն այնքան ժամանակով, որքան տեվում է լիակատար ցանքաշրջանառությունը։

Դաշտավարական բրիգադին հոդամասեր են հատկացվում ցանքաշրջանառության դաշտերում այնքան ժամանակով, որքան ցանքաշրջանառության տեվողությունն է։

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կոլխոզի վարչությունը հատուկ արձանագրությամբ ամրացնում է նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանող անասունները և տնտեսական շենքերը։

Անասնապահական բրիգադները կազմվում են առնվազն յերեք տարի ժամանակով։

Արտելի վարչությունը յուրաքանչյուր անասնապահական բրիգադին ամրացնում է մթերատու անասուններ, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտարն ու քաշող ուժը և անասնապահական շենքեր։

Արտելի անդամների մեջ աշխատանքը բաժանում է անմիջականորեն բրիգադիրը, որը պարտավոր է լավագույն ձևով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կոլխոզնիկին, թույլ չտալով վոչ մի խնամիություն և ընտանեկանություն՝ աշխատանքը բաշխելիս խստիվ հաշվի առնելով ամեն մեկի աշխատանքային վորակավորումը, փորձառությունն ու ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և ծիծ տվող մոր նկատմամբ՝ նրանց աշխատանքը թեթևացնելու անհրաժեշտությունը, աշխատանքից ազատելով նրանց ծննդաբերությունից մի ամիս առաջ և ծննդաբերությունից մի ամիս հետո, պահպանելով այդ յերկու

պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում СССР
им. Маснисяна
Ս. Մասնիսյանի անվան
2874 6-60

ամսվա համար նրանց հասանելիքը, նրանց աշխորերի միջին վաստակի կեսի չափով։

15. Գյուղատնտեսական աշխատանքներն արտելում կատարվում են գործավարձի հիման վրա։

Արտելի վարչությունը մշակում է և կոլխոզնիկների ընդհանուր ժողովը հաստատում է բոլոր գյուղատնտեսական աշխատանքների արտադրանքի նորմաները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումներն աշխորերով։

Յուրաքանչյուր աշխատանքի համար հաստատվում է բարեխղճորեն աշխատող կոլխոզնիկին մատչելի աշխատանքի նորմաներ, հաշվի առնելով բանող անասունների, մեքենաների և հողի դրությունը։ Յուրաքանչյուր աշխատանք, որինակ՝ մի հեկտար վարը, մի հեկտար ցանքը, մի հեկտար բամբակի բուկ տալը, մի տոն հացահատիկ կալսելը, մի ցենտներ ճակնդեղ հանելը, մի հեկտար վուշ գզելը, մի հեկտար վուշ թրջելը, մի լիտր կաթ կթելը և այլն, գնահատվում է աշխորերով, նայած աշխատողից պահանջվող վարպետությանը, աշխատանքի բարդությանը, դժվարությանը և արտելի համար ունեցած կարևորությանը։

Բրիգադիրն առնվազը շաբաթը մեկ անգամ հաշվում է արտելի յուրաքանչյուր անդամի կատարած ամբողջ աշխատանքը և սահմանված գնահատումների համաձայն կոլխոզնիկի աշխատանքային գրքույկում գրանցում է նրա վաստակած աշխորերի քանակը։

Արտելի վարչությունն ամիսը մեկ անգամ կախում է արտելի անդամների ցուցակը, մատնանշելով վերջացած ամսում նրանց վաստակած աշխորերի քանակը։

Յուրաքանչյուր կոլխոզնիկի տարեկան աշխատանքի արդյունքը և յեկամուտը, բացի հաշվետարից, անպայման հաստատում են բրիգադիրը և արտելի նա-

խագահը։ Արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխորերի ցուցակը կախվում է ի գիտություն բոլորի, վոչ ուշ, քան արտելի յերկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովի կայանալուց յերկու շաբաթ առաջ։

Յեթե դաշտավարական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ իրեն ամրացված հողամասից ստանում է կոլխոզի միջին բերքից բարձր բերք և կամ անասնապահական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատվությունը, անասունների ավելի գերացումը և մատղաշների լիակատար պահպանումը, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտի վրա հավելումներ է անում, նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աշքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադիրներին և ֆերմայի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով։

Յեթե դաշտավարական բրիգադը վատ աշխատանքի պատճառով իրեն ամրացված հողամասերից հավաքում է կոլխոզի միջին բերքից ցածր բերք, կամ կոլխոզային անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով տալիս է միջակից ցածր կաթնատվություն, անասունների գերացում և մատղաշ անասունների պահպանում, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտներից պահումներ է կատարում, նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով։

Արտելի յեկամուտների բաշխումն անդամների միջև կատարվում է բացառապես արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխորերի քանակի համաձայն։

16. Տարվա ընթացքում արտելի անդամին կարելի

յե կանխավճար տալ վոչ ավելի, քան աշխատանքի համար նրան հասնող գումարի 50 տոկոսի չափով։

Վարչությունն արտելի անդամներին բնավճարով կանխավճար ե տալիս հացահատիկը կալսելու սկզբից կոլխոզի ներքին կարիքներին հատկացված 10—15 տոկոս կալսված հացահատիկից։

Տեխնիկական մշակույթների ցանքով զբաղվող արտելում, արտելի անդամին դրամական յեկամուտը վճարվում ե առանց սպասելու, վոր վերջանա բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի, թեյի, ծխախոտի և այլնի հանձնումը պետությանը, այլ հանձնելուն զուգընթաց՝ առնվազը շաբաթը մի անգամ՝ հանձնված արտադրանքի արտելի ստացած դրամի 60 տոկոսի չափով։

17. Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստիվ պահպանել իրենց կոլխոզային սեփականությունը և կոլխոզային դաշտերում աշխատող պետական մեքենաները, աշխատել ազնվորեն, յենթարկվել կանոնադրության պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչության վորոշումներին, պահպանել ներքին կարգ ու կանոնները, ճշտիվ կատարել վարչության և բրիգադի նրանց հանձնարարված աշխատանքները և հասարակական պարտականությունները, խստիվ պահպանել աշխատանքի կարգապահությունը։

Հանրային գույքին անտնտեսականորեն և անփույթ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս չգալու, վատորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու ներքին կարգ ու կանոնների այլ խախտումներ կատարելու համար, վարչությունը մեղավորներին տույժի յե յենթարկում ներքին կարգ ու կանոնների համաձայն, որինակ՝ կրկին կատարել տալ վատորակ կատարված աշխատանքն՝ առանց աշխորեր հաշվելու, նախազգուշացում, հանդիմանություն, պարսավանքի յենթարկել ընդհանուր ժողովում, դրանցել սև տախտակին, տուգանել մինչև հինգ աշխորի չափով, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից։

Այն դեպքում, յերբ դաստիարակելու և պատժելու համար արտելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներգործում, վարչությունն ընդհանուր ժողովում դրնում ե արտելի անուղղելի ադամներին արտելից վտարելու հարցը։

Վտարումը կատարվում ե գյուղատնտեսական արտելի կանոնադրության 8-րդ կետում սահմանված կարգով։

18. Հանրային կոլխոզային և պետական սեփականության ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու անասունները և մեքենատրակտորային կայանների մեքենաները ցույց տրվող ամեն մի ինչասարքական վերաբերմունք արտելը հաշվում ե վորպես դավաճանություն կոլխոզի ընդհանուր գործին և ոգնություն՝ ժողովրդի թշնամիներին։

Կոլխոզային կարգերի հիմունքներն այդպես հանցավոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք արտելի կողմից դատի յեն տրվում բանվորա-գյուղացիական պետության որենքի ամբողջ խստությամբ՝ նրանց պատժելու համար։

8. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը կառավարում ե արտելի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ընդհանուր ժողովի ընտրած վարչությունը։

20. Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձրագույն որգանն ե։

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում է արտելի նախագահ և արտելի վարչություն, ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընտրորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում է ռայոնական գործադիր կոմիտեի կողմից։

բ) կատարում է նոր անդամների ընդունելություն և անդամների վտարում արտելի կազմից։

գ) հաստատում է տարեկան արտադրական պլանը, մուտքի և ելքի նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխորերով։

դ) հաստատում է մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագիրը։

յե) հաստատում է վարչության տարեկան հաշվետվությունը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր եզրակացության հետ միասին, ինչպես և վարչության հաշվետվությունները գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաների վերաբերմամբ։

զ) հաստատում է զանազան ֆոնդերի չափը և աշխորի համար տրվելիք մթերքի և դրամի քանակը։

ե) հաստատում է արտելի ներքին կարգ ու կանոնները։

Կանոնադրության այս կետում թվարկված բոլոր հարցերի վերաբերմամբ արտելի վարչության ընդունած վորոշումներն անիրական են առանց ընդհանուր ժողովի հաստատման։

Ընդհանուր ժողովը՝ արտելի անդամների ընդհանուր թվի առնվազը կեսը ներկա լինելու դեպքում, որինական է բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչության ու նախագահի ընտրության հարցից, արտելի կազմից վտարելու հարցից և զանազան ֆոնդերի չափին վերաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ է, վոր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների ընդհանուր թվի առնվազը յերկու յերրորդ մասը։

Ընդհանուր ժողովը վորոշումներ է ընդունում ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ։

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովը յերկու տարի ժամանակով ընտրում է վարչություն 5—9 հոգուց բաղկացած կազմով, նայած արտելի մեծությանը։

Արտելի վարչությունն արտելի գործադիր որգանն է և արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ պատասխանատու յե արտելի աշխատանքի համար և պետության հանդեպ՝ արտելի պարտավորությունների կատարման համար։

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքի ամենորյա ղեկավարության, ինչպես և վարչության վորոշումների կատարման ամենորյա ստուգման համար արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է վարչության նախագահը։

Նախագահը պարտավոր է վարչության նիստ գումարել ամսական առնվազը յերկու անգամ՝ ընթացիկ գործերը քննարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար։

Վարչության նախագահին ոգնելու համար վարչության անդամներից ընտրվում է նախագահի տեղակալ, նախագահի առաջադրությամբ։

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում է նախագահի ցուցումներին։

23. Անասնապահական ֆերմաների բրիգադիրներին ու վարիչներին նշանակում է արտելի վարչությունն առնվազը յերկու տարի ժամանակով։

24. Հաշվապահությունը վարելու և գույքի հաշվառում կատարելու համար, վարչությունն արտելի անդամներից ընտրում է կամ վարձով հրավիրում է հաշվատար։ Հաշվատարը վարում է հաշվապահությունն ու հաշվարկումը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում է արտելի վարչությանն ու նրա նախագահին։

Հաշվատարին վոչ մի իրավունք չի տրվում ինքնակամ տնորինել արտելի միջոցները, կանխավճար տալ և ծախսել ընամթերքի ֆոնդերը։ Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտելի վարչությանը և նախագահին։

Արտելի ծախսի գրամական փաստաթղթերն ստորագրում են բացի հաշվատարից նաև արտելի նախագահը կամ նրա տեղակալը։

25. Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է վարչության տնտեսական-ֆինանսական ամբողջ գործունեությունը, ստուգում է թե գրամի և թե ընամթերքի մուտքերն՝ արդյոք սահմանված կարգով մուտք գրված են արտելում, արդյոք պահպանվել և միջոցները ծախսելու կանոնադրությամբ նախատեսված կարգը, բավարար հոգատարությամբ պահպանվում է արդյոք արտելի գույքը և չկան արդյոք արտելի գույքի և գրամական միջոցների հափշտակումներ ու վատնումներ, ինչպես է կատարում արդյոք արտելն իր պարտավորությունները պետության հանդեպ, ինչպես է վճարում իր պարտքերը և ինչպես է գանձում իր ստանալիքներն արտելի պարտապաններից։

Դրա հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը մանրազնին ստուգում է արտելի հաշիվները իր անդամների հետ, յերևան է բերում թերահաշվի, աշխատանքի վոչ ճիշտ գրանցման, աշխատանքի հաշիվները ժամանակին չտեսնելու ամեն մի դեպք և արտելի ու նրա անդամների շահերի խախտման այլ դեպքերը։

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է կատարում տարեկան չորս անգամ։ Վերստուգիչ հանձնաժողովը վարչության կողմից ընդհանուր ժողովին ներկայացվող տարեկան հաշվետվության առթիվ տալիս է իր յեզրակացությունը, վորն ընդհանուր ժողովը լսում է վարչության հաշվետվությունից անմիջապես հետո։ Վերստուգման արձանագրությունը հաստատում է ընդհանուր ժողովը։

Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեության համար հաշվետու է արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ։

Գյուղատնտեսական արտել Նախագահ՝

Ներկա կանոնադրությունն ստորագրելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից լիազորներ՝

1.

2.

3.

4.

5

6.

Հայկական ռայոնի ..... գյուղխորհրդի ..... գյուղի ..... անվան գյուղատնտեսական արտելի ներկա կանոնադրությունը, վորը քննարկված և ընդունված է կոլխոզի անդամների 193..... թվի ..... ընդհանուր ժողովում, համաձայն № ..... արձանագրության, տոմարագրված է Հայկական ռայոնի ռայգործկոմի նախագահության 193..... թվի ..... նիստում համաձայն № ..... արձանագրության։

Հայկական ռայոնի գործադիր
կոմիտեյի նախագահ՝

Ռայոնական հողային բաժնի վարիչ՝

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
Гос. Библиотека
ZUHD- ՀՍՍՀ
им. А. Мясникяна

Ответственный по выпуску П. Чатыньян
Тех. редактор Д. Джинибалаян
Корректор С. Акопян

Уполоблит № С—28. Сдано в набор 19 августа 1937 г. Подписано в печать 21 января 1938 г. Ст. ф. Б5. Объем 1¾ п. л. Тираж 2000. Заказ № 1518.

Типография Областного армянского издательства „Большевик“
Ростов-Дон, Ворошиловский пр., № 27.

«Ազգային գրադարան»
NL0204783

29.752